ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

2 (18), 2008

ԳՄ 82.09 *Գրականություն*

ՁԱՅՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Լ. Գրիգորյան

Մինչեւ «Մարտութա սարի ամպերը» ժողովածուն Մ.Գալշոյանը պատմվածքների մի շարք է գրել կոմիտասի կյանքից եւ «Ծիրանի ծառ» խորագրով ի մի բերել «Ծաղկած քարեր» գրքում: Դրանք առանձին դրվագներ են կոմիտասի որբանոցային, ճեմարանական ստեղծագործական կյանքից: Պատմվածքները շաղախված են առանձին երգերի մոտիվներով:

Մուշեղ գալշոյանի պատմվածքները կյանքի պատառիկներ են՝ իրական շոշափելի: Նա ճիգ չի թափում՝ բարդ հանգույցների դիմելու, բազմարանակ կնոպարներ գծելու, փոքրիկ պատկերների միջոցով տալիս է կյանքի գծանկարը: Մի երկու դիպուկ շտրիխ, հոգեբանական պատահ, ճիշտ գտնված առանձին մանրամասներ սրանք են Գալշոյանի կարճ պատմվածքների հիմքը:

Գրողը կարծես էտյուդներ է վրձնում: Խուսափելով կառուցվածքային խճճվածությունից, նա ստեղծում է տվյալ պահի կամ երևույթի անմիջական տպավորությունը և նկատել որ Գալշոյանը հիմնականում ձգտում է առաջին պլանի վրա պատկերել կերպարի բնավորության մի ընդգրկված նրանց:

«Երգը ժողովրդի պատմությունն է»,- կոմիտասի խոսքն է «Դարուտի» պատմվածքում: Երգը որպես ժողովրդի պատմություն և կոմիտասի կյանքը որպես ժողովրդի պատմություն և կոմիտասի կյանքը որպես պատմության խորհրդանիշ. ահա այս խտացումն է պատմվածաշարի ենթիմաստը՝ խիստ բնութագրական Գալշոյանի ստեղծագործական հակումներին: Կոմիտասի կերպարն այս անգրնքով պատկերել է նաև Պարույր Սևակը «Անլռելի զանգակատունը» պոեմում, Ռաֆայել Արամյանը՝ կոմիտասյան շարքի պատմվածքներում:

Աշխարհով մեկ սփռված գեղջուկ հայերի հոգում մեծնող երգը փրկելն ու ժողովրդին վերադարձնելը կոմիտասյան հանճարի, նրա կենսակերպի արտահայտությունն էր, ամեն պահի մաքառեց ժողովրդի ինքնուրույնությունը երգով փաստելու համար: Գալշոյանն անտարբեր չէր կոմիտասի հանդեպ հենց այն պատճառով, որ այս անհատն ամենալավն էր լավն խտացնում իր մեջ ժողովրդի ճակատագիրը: Պատմվածաշարը հետաքրքիր է մեկ այլ առումով, այն հնարավորություն է տալիս երգահանի կենսագրական փաստերի վերլուծությունը առնչել ժողովրդի պատմությանը՝ իրեն հատուկ սթափ ու բնաբխույզ հայացքով: Գալշոյանի համար անընդունելի է կեղծ, հիացական վերաբերմունքն անցյալի շատ երեւույթների հանդեպ: Փաստերի համադրման ճանապարհով գրողը բացահայտում է բնորոշն ու տիպականը, ինչը հատուկ է ժողովրդի պատմության տրամաբանությանը:

Շարքն ընդհանրապես հետաքրքիր է իր կառուցվածքով: Յուրաքանչյուր պատմվածք թեմայի զարգացման մի օղակ է: Կոմիտասի կենսագրության պատմությունը տրվում է հայ ժողովրդի ճակատագրի հետ սերտ կապի մեջ,նրանից անբաժան: Կոմիտասը գալիս է Էջմիածին, որքերի հետ ոտք դնում Արեւելյան Հայաստանի հողի վրա («Օրն ավետյաց»): Պատմվածքում, որտեղ հերնիակն անդրադառնում է Հայոց մեծ եղեռնի պատճառած հետեւանքներին, ներկայացվում է որքերի մի խումբ, որոնք հավաքվել են սբ. Թեոդոս եկեղեցու բակում եւ Գեորգ վարդապետ Դերձակյանը նրանց է մոտենում եւ հաղորդում, որ Էջմիածնի վեհափառը որոշել է այդ որքուկներից լավ ձայն ունեցողին տանելու է Էջմիածին: «Քսան որք հավաքվեցին սբ. Թեոդոս եկեղեցու բակում: Ամառավերջի երեկո էր,գաղթի սալահատակից, վանքի քարերից ծլլում էր գոլը,նյոում էր ալիք-ալիք ու որքերին բերում հաճելի լռարմություն: Ամառ էր,բայց նրանց չամրացած ոսկորներում ցուրտ կար, և տաքությունը դուր էր գալիս: Գեորգ վարդապետ

Դերձակյանի հայացքը սահեց, ծանրացավ, ու մեկիկ-մեկիկ ճգնաժամային մանչերի կոպերը: Բայց մինափառը պահանջել է միայն մեկը՝ քեզ հետ Էջմիածին կբերենս մի որբ, կընտրես ամենածայնեղին:

«Լարդապետի հայացքը կանգնեց Սողոմոնի դեմքին: Ու մանչի լայն բացած խոշոր աչքերում թրթռաց հայացքը»:

Այնուհետև սկսվում են հայ երգի ու հոգու կորած մասունքների որոնումները: «Դարոտի» պատմվածքում արդեն Սողոմոնը Սողոմոն չէր:Երեսունմեկ տարեկան կուսակրոն վարդապետ էր, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասատու: Պատմվածքի այուիժեն զարգանում է Կոմիտասի խոհերի ու հիշողությունների նկարագրման եղանակով:

«Մոսկվայում ռուս ուսանողները բողոքի ցույց արեցին: Սուլթանի բանակը գնաց Կարինի վրա: Լեհ ուսանողները ցույց արեցին, բանակը գնաց Բասենի վրա: Կալկաթայում միտինգ եղավ, սուլթանի բանակն անցավ Բաղդ: Բռնտոնում «Հայոց միացյալ բարեկամների» ժողովում գրականագետ Ջուլիա Հատունը պահանջեց իր բողոքը տպագրել թերթում, ասկյարներն անցան Մարաշ: Բիրմինգամում օտարազգիները ծափահարեցին պրոֆեսոր Թումանյանին՝ Հայաստանի անցյալի մասին կարդացած դասախոսության համար, Ռեգմի փաշան գնաց Զեյթունի վրա: Եվրոպական թերթերը գրեցին, և «Մշակը» արտատպեց. «Հայերը պաշտպանվում են հերոսաբար», Ալի բեյը Ադանայից դուրս եկավ, ընց Զեյթունի վրա: Ֆրանսուհի գրող Սեներինը հուսահատորեն ճչաց. «Բայց ես զարմանում եմ լռության դեմ, եսասիրությունից բխած այս եղեռնական Ազատության դեմ».- և ...[1]

Կոմիտասը կործանվող հայրենիքի բոլոր շեներն է մտնում և նշխար-նշխար հավաքում հայկական ժողովրդական երգերը: Պատմվածքում հաճախում է իր ժողովրդի համար տառապող մեծ երգչի ու երգահանի կերպարը: Հայ երգի Մաշտոցը շտապում է կորստյան վիհից փրկել հայկական ժողովրդական երգերը:

«Ադբրանց արուն մեզ բարերուն» պատմվածքում նկարագրում է,թե ինչպես Կոմիտասը երգչախումբ է ստեղծել հայ մանուկներից և հայ երգը հնչեցրել աշխարհի մեծ քաղաքների բեմերում: Արևմտյան Հայաստանից հավաքած ժողովրդական երգի նշխարներն Կոմիտասն ի ցույց է դնում ողջ աշխարհին:

Կոմիտասի մադկային բարձր բարոյականության մասին է պատմում «Սպասում» պատմվածքը: Կոմիտասը գտնում է մի դրամապանակ՝ մեջը 10 ֆրանկ: Հիմա Կոմիտասը խորհում է, «Տխուր բան է օրվա ապրուստ չունենալը: Դա մարդու ծնունդի դեմ, քնության դեմ բան էր: Ամեն մարդ հանապազօրյա հաց պետք է ունենա օդ շնչելու բնական իրավունքով, հագուստ ու կապուտ պետք է ունենա իր մարթու գոյության բնական իրավունքով: Եվ հաց ու թաց հագուստ-կապուտի համար չէ որ մարդիկ աշխարհ են գալիս: Դրանք վերուստ տրվում են նրանց ծնունդի հետ, տրվում օդ ու մորթու պես: Իսկ եթե չկա, եթե չունի, մեծ ոճրագործություն է կատարվել»:[1]

«Ու եկավ նա, -շարունակում է Դալշոյանը, - դեռատի կին էր՝այր մարդու բաճկոնով, այր մարդու ոտնամաններով, ճոթերը բզիկ գլխաշորով: (Անակնկալ էր՝չգիտես ինչու, մտքով չէր անցել, որ դրամապանակի տերը կարող էր կին լինել»:)

Դեռատի կնոջ աչքերում բողոք կար, և հույսը լացի պես կախվել էր ու դողում էր: Նա բայլում էր տրտում ու անվստահ և ոտքերը հայացքի հետքով կամուկաց շարժվում էին.հայացքի հետ դողում, աչքաթարթումի հետ կանգնում՝ ճլպտորում մի թիզ գետնին,մտածում աչ ու ձախ թեքվելու, ետ դառնալու մասին:Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց կոմիտասին, հետո կծկվեց, կուչ եկավ, դարձավ գողտրուկ հայացք: Կոմիտասը դրամապանակը տալիս է կնոջը ու հեռանում:

Հաջորդ պատմվածքը կոչվում է «Ջայնիկդ ի հոգիս»: Այստեղ նկարագրվում է, որ շոգենավով Պոլիս էր գնում Կոմիտասը: Որը գարնան օր է, ու շատ էր ջրերի աղմուկը: Ապա նկարագրում է, թե ինչպես Կոմիտասը լսում է արաղաղի ձայն, ու նա հիշում է իր արաղաղին: Ամբողջ երեւակայությամբ տեղափոխվում է իր անցյալը, հիշում իր արաղաղին: Եվ այստեղ ներկայացվում են Կոմիտասի ամբողջ տառապանքները: «Ջայնիկդ ի հոգիս»,- Կոմիտասը մտքում արաղաղը կրծքին սեղմեց... Մեկել անգամ ատ արաղաղին պետք է ձեռք տամ, ձեռքս

անպատճառ պիտի դիպցնեմ: Կոմիտասը ակն ածեց խոտոտին, ծանր քայլերով մոտ գնաց, մորմոք նայեց պալատական մի աքաղաղով այդպես ոգեւորված իր հայրենակիցներին եւ ասաց.

-Ափսոս, որ ձեր հոգվո ականջները տակավին օտարոտի կանչերով ձեզ կոգեւորեն:

Շարքը վերջանում է Կոմիտասի երգչախմբի ստեղծման դրվագով («Ձայն ամենայն հայոց...»), որը խորհրդանշական իմաստ ունի:

Կոմիտասը թափառել էր հայոց աշխարհում, լսել ժողովրդի սրտի ու հոգու ձայնը եւ որոշել էր. «Ձայն ամենայն ազգի պիտի հնչեցնել խմբովին...: Եվ հիմա հասել էր Պոլիս, մտել ազգային վեղարտնական վարժարան՝ խմբելու ձայն ամենայն հայոց»: Կոմիտասը շեղ նայում էր ուսանողներին, զրուցում անբառ: Նա վճռական ասաց.

-Հարկավ, երգչախումբ կազմելու դեմ չեր: Եվ ձեզ շատ չեմ նեղացնի: Ամեն մեկդ մեկ անգամ «ֆա~» պետք է ասեք: Այ էսպես...[3]

Աշխարհայացքային առումով այս պատմվածքները հոգեհարազատ են Գալշոյանի ստեղծագործությանը: Հմտորեն օգտագործելով մեծ երգահանի կյանքին ու գործունեությանը վերաբերող փաստերը՝ Գալշոյանը ստեղծել է կենդանի, ժողովրդի հոգսերով ապրող, հույսվածքով: Կենսուրախ բնավորությունը, ինչն իրականում քնորոշ է եղել մեծ արվեստագետին:

Գալշոյանը դուրս չի գալիս փաստերի ոլորտից: Նա նախընտրում է «դեպքը» եւ դրա շրջանակում էլ կառուցում ասելիքը: Իհարկե, պատմվածաշարը կարող էր ընդհանրակվել: Պատումները միմյանց հետ ներքին սյուժետային կապ չունեն, բայց ընդհանուր են տրամադրությամբ եւ գծում են ժողովրդական երգի մեծ սիրահարի կերպարը: Պատմվածքները կառուցված են գերազանցապես հերոսի ներքին խոսքի հյուսվածքով: Գալշոյանը նման դեպքերում գտնում է իրեն, իսկ երբ փորձում է սյուժե ստեղծել երեւում են սպիտակ կարերը:

Գրողն ավելի ծանրացել է երգահանի մարդկային որակների վրա եւ դրանց շուրջ էլ փորձել է բացահայտել Կոմիտասի կերպարի առանձին կողմերը: Հետաքրքիր է, որ Գալշոյանը չի գնացել հերոսի սրբացման ճանապարհով, թեեւ դրա հիմքերն ուներ. մեր բազմադարյան մշակույթի պատմության մեջ Կոմիտասն այն բացառիկ դեմքերից է, որի անվան կողքին հնչել է «Աստվածային» մակդերը: Իհարկե, նման քնորոշումը կապված է եղել միայն նրա արվեստի բյուրեղային մաքրության հետ: Այն մեծ չափով պայմանավորված էր Կոմիտասի մարդկային էությամբ՝ արարելու բացառիկ հատկություն, ազնվություն, բարություն եւ այլն: Բնավորության առանձին կողմերը բացահայտելու առումով գալշոյանի պատմվածքները հաջողված են:

Резюме

В данной статье автор разбирает цикл рассказов талантливого прозаика М.Галшояна о жизни и деятельности великого композитора Комитаса. Эти рассказы оставляют впечатление художественных этюдов. М.Галшояну удалось создать образ Комитаса, воплощающий в себе и душевное богатство, и ту боль, которую пришлось вынести народу во время геноцида в Османской Империи 1915 года, жертвой которого стал и сам знаменитый композитор.

Ծանոթագրություններ

1. Մուշեղ Գալշոյան, Ծիրանի ծառ, Երեւան, 1989, էջ26:
2. Նույն տեղում, էջ 62:
2 Նույն տեղում, էջ79: